Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1017-11.11.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքը լրացնել 53.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 53.1. Ընկերության բաժնետերերի ռեեստրից տվյալների տրամադրումը

1. Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված ֆիզիկական անձ բաժնետերերի (անվանատերերի) անունը, ազգանունը, անձնագրի սերիան եւ համարը (միայն այն պետական կառավարման մարմիններին, որոնց ցանկը կսահմանի Հայաստանի Հանրապետության կառավարությունը), իրավաբանական անձ բաժնետերերի (անվանատերերի) անվանումը և պետական գրանցման համարը, ինչպես նաև այդ բաժնետերերին (անվանատերերին) պատկանող բաժնետոմսերի քանակի եւ տեսակի (դասի) վերաբերյալ տեղեկությունները բաց են և համապատասխան ռեեստրը վարող անձի կողմից ենթակա են տրամադրման ցանկացած անձի՝ նրա դիմումի հիման վրա՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմիններին և այլ անձանց տրամադրվում են համապատասխան վճարի դիմաց, որի նվազագույն եւ առավելագույն չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ: Ընդ որում սույն մասով սահմանված վճարի չափը չի կարող գերազանցել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 32-րդ կետով սահմանված չափը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկության հեղինակ	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 53.1. հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «վկայական» բառը՝ նկատի ունենալով, որ ՀՀ Նախագահի ստորագրմանը ներկայացված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավաբանական անձի գրանցման համար վկայական չի տրվում:	Ընդունվել է, հոդվածը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 53.1. հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է «անձնագրի սերիան եւ համարը» բառերից հետո ավելացնել «(միայն այն պետական կառավարման մարմիններին, որոնց ցանկը կսահմանի Հայաստանի Հանրապետության կառավարությունը)» բառերը: Սույն փոփոխությունը ելնում է մարդկանց նույնականացման տվյալների գաղտնիության ապահովման անհրաժեշտությունից: Հակառակ դեպքում ցանկացած անձ կարող է իմանալ այլ անձանց նույնականացման տվյալները և օգտագործել այդ տվյալները իր անձնական, այդ թվում նաև հանցավոր նպատակներով:	Ընդունվել է, հոդվածը խմբագրվել է:
ՀՀ կառավարություն	«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 53.1. հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է սահմանել դրույթ, որով օրենսդրորեն կսահմանափակվի տեղեկատվության տրամադրման համար սահմանվելիք վճարի վերին շեմը:	Ընդունվել է, հոդվածը խմբագրվել է: